



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

10 դեկտեմբերի 2019 թվականի N 488- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ
29-Ի ԹԻՎ 257-Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով

կարգադրում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2019 թվականի հուլիսի 29-ի
«Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության
Տավուշի մարզպետարանի ապարատի պահպանման ծախսերով «Այլ նպաստներ բյուջեից»
հոդվածով նախատեսված գումարների նպատակային ծախսման համար
ուսումնասիրություններ կատարելու ու առաջարկություններ ներկայացնելու նպատակով
հանձնաժողով ստեղծելու և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2015
թվականի ապրիլի 2-ի N 11-Ա կարգադրությունն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 257-Ա
կարգադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) կարգադրության 1-ին կետում.

ա. «Նարինե Ճաղարյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի առողջապահության և
սոցիալական ապահովության վարչության գլխավոր մասնագետ» բառերը փոխարինել
«Մերուժան Հարությունյան - ՀՀ Տավուշի մարզպետի օգնական» բառերով,

բ. «Տիգրան Մուշեղյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի քաղաքաշինության վարչության
պետի ժամանակավոր պաշտոնակատար» բառերը փոխարինել «Աղաբեկ Գալստյան -
ՀՀ Տավուշի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՀԳՄ ՏՍ համակարգման
բաժնի ժամանակավոր պաշտոնակատար» բառերով:

2) կարգադրության 1-ին կետում ավելացնել հետևյալ բառերը.

<<Մանե Ղազումյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար>>:

ՄԱՐԶՊԵՏ

Հ.ԶՈՐԱՆՅԱՆ

X



2019թ. դեկտեմբերի 10
ք.հջևան